ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (18 ԱՊՐԻԼԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-528-Ն) 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ.

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը՝ գործի քննությունը հետաձգել մինչև 2010 թվականի հունվարի 14-ը, ժամը 11.00՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) 30.11.2009թ. ստացված՝ գործին առնչվող լրացուցիչ փաստաթղթերը ՍԴ անդամների և կողմերի կողմից ուսումնասիրելու համար անհրաժեշտ ժամանակ տրամադրելու նպատակով,

2) պատասխանող կողմից՝ ՀՀ Ազգային ժողովից պահանջել 10-օրյա ժամկետում սահմանադրական դատարան ներկայացնել սույն գործով զեկուցողի՝ ՍԴ անդամ Վ. Հովհաննիսյանի առաջադրած հարցերի (հարցերի ցանկը կցվում է որոշմանը) պատասխանները, որոնք բխում են սահմանադրական դատարանի պահանջով պատասխանող կողմի ներկայացրած լրացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրությունից, դրանք «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի, մասնավորապես՝ 7-րդ մասի, պահանջների հիման վրա ուսումնասիրելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ-112